Եղիշե Չարենց

(1897 - 1937)

<u>Բանաստեղծություններ</u>

Աղոթք
Այլևս ինչ մնաց քեզ
Այն ո՞վ է ստոր այն պոետը
Այրած երգեր
Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան Ամրոցում
Անառակ որդիներին
Անկումների սարսափից
Անքնություն
Արմենուհի Տիգրանյանին
Բալլադ սիրո
Բարձրահասակ բարեկամիս
Բոլորը քեզ
Գիշերն ամբողջ
Դաշնակցականներին
Դարեր շարունակ
Ես իմ անուշ Հայաստանի
Զարմանալի աշուն
Էլի գարուն կգա
Էպիքական առավոտ
Թիֆլիսցի կինտոն
Թմբուկ են խփում
Թուղթ Ակսել Բակունցին
Իմ լուսաստղը
Իմ օրերում
Ինչպես երկիրս անսփոփ
Իրիկուն է, քույր

Լուսամփոփի նման
Լուսամփոփի պես աղջիկ
Խեղկատակ
Հայաստանին
Հայրենիքում
Հարդագողի ճամփորդները
Հնարավո՞ր է արդյոք
Մահվան տեսիլ
Մեռած պոետին
Մարիոնետկա
Որքան դաշտեր որ կան
Պատահական անցորդին
Ստալին
Սև կախաղան

Աղոթք
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Փրկի՛ր ինձ, աստվա՛ծ, երկու բանից —
Թե Ք.-ի նման խեղճ թշնամուց,
Թե Ա.-ի նման բարեկամից։
1928

Այլևս ինչ մնաց քեզ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Այլևս ինչ մնաց քեզ՝ խնդրելու կյանքից,—
Օ՜, անհանգիստ իմ սիրտ ու անկարող...
Ախ, խոնջենքի՜ միայն անեզրական կարոտ,—
Խաղաղություն անխոհ,- մահվան հանգիստ...

Այն ո՞վ է ստոր այն պոետը
հեղինակ՝ Եղիշե Չարենց

<. . . . . >
<. . . . . >
Այն ո՞վ է ստոր այն պոետը, որ
Իբրև անցյալի դրոշակակիր -
Երգով, նկարով, պոետի խոսքով
Դեպի անցյալի գիրկն է կամեցել
Քշել մեր կյանքի ընթացքը վսեմ,-
Իբրև օձ՝ իր մոր գիրկը սողացող...
Ոչ:- Չեմ հավատում, որ նաիրական
Աշխարհում ամբողջ գտնվի գեթ մի

Պոետ, որ այսօր իր բախտը գտնի
Իր ժողովրդի վսեմ, տիրական

Երթը խափանող ուղիների մեջ. . .
Ես չեմ հավատում, որ միայն վերին
Շնորհքով մղված պոետ Մահարին
Անգամ նա լինի դավաճան մի գեջ:

Որ նահիրական ոսկե քնարով,
Մատներով իր նուրբ եւ պոետական -
Ցերեկը գրի երգեր դյութական,
Իսկ գիշերային իր սև քանքարով -

Ձգտի խորտակել և՛ լույս, և՛ անգին
Իր նահիրական ոգով հղացած -
<. . . . . > անեղծ թովչությունը
Եվ երգիչ դառնա անիրաւ տարփանքի. . .

Օ, չե՛մ հավատում, թե Ակսելն անգամ,
Որ Եսավի պես, պժգնելի մի օր
Իր առաջնության իրավունքը բորբ
Եղծի,- հանուն ինչ տենչի անձնական՝

Կշտության,- մի բուռ ապուրով ոսպե
Ծախելով տաղանդն իր աստվածային,-
Օ, չե՛մ հավատում, որ անգամ ահից
Խելահեղ դարձած այրն այս իսկապես

Ելնի շողոքորթ, իբրև սրիկա,-
Եվ շքե՛ղ ոգով իր հանճարափայլ
Դառնա մատնության մարգարե մռայլ,-
Եվ կյանք աղերսե - իր դեմքը ներկած

Իր նվիրական հույզերն անարգող,
Սև, հայրենակոխ իղձերի գույնով,-
Լավ չէ՞ - հրկիզված մահաբեր թույնով -
Հեռանալ կյանքից՝ իբրև [մարդ անկոր]. . .

<. . . . . >
<. . . . . >
Կյանքում դարձած մի <անձ տիրական>
Դափնու փոխարեն՝ իր արյամբ ցողված. . .

Ես չե՛մ հավատում, որ Թոթովենցի
Ձեռքը, որքան էլ լինի հանցապարտ՝
Իր ժողովրդի ինքնությամբ հպարտ՝
Բարձրանա մի օր, որ որոմ հնձի . . .

Եվ չեմ կամենում սրտով պոետի
Ես վայրկյանին այս՝ տխրությամբ անհուն՝
Հավատալ անգամ, որ խեղճ Վշտունու
Կյանքում կա հանցանք՝ ստոր և հետին . . .

Այրած երգեր
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Երբ երեկոն իջավ, որպես հոգնած ճամփորդ,
Եվ փոշեպատ նստեց տանիքների վրա,-
Ես սենյակս մտա իմ խոհերի ճամփով
Եվ հանեցի երգերըս մի երեկո գրած:
Ես հանեցի երգերըս ու կարդացի կրկին
Պատմություններ, հուշեր մի ավերված հոգու,
Եվ խորշեցի ես ինքըս իմ հուսահատ երգից,
Եվ ամոթի թախիծն էր իմ ճակատին չոքում,-
Երբ տողերի միջից իմ երգերի, իմ այդ
Մի երեկո գրած նվագների տակից
Հառնեց հանկարծ, նայեց ու ժպիտով ժլատ
Ինձ ողջունեց նազով արդեն մեռած մի կին:
Ու տողերիս միջից ինձ պարզեցին երկու
Նախատինքի սրեր՝ երկու աչքեր մեռած,
Հետո սրբեց ճակատըս նա իր նրբին ձեռքով,
Եվ խո՛ր հանգիստ իջավ իմ աչքերի վրա:
Նա ինձ ասաց, այդ կինը, իմ տողերի միջից.
« - Արիացի՛ր, ընկե՛ր իմ, ամրապնդվի՛ր ոգով,
Մաքրի՛ր հոգնած քո սիրտը կարոտներից չնչին,
Որ վերանա խավարը քո հուշերին չոքող:-
Թե հիշատակն իմ թանկ է դեռ քո սրտին հիմա,
Թե ուզում ես, որ հուշըս չխավարի քո մեջ,-
Կրի՛ր պայծառ անունդ մարտիրոսի նման,
Եղիր ոգով անդու՛լ դու, ու մաքառող, ու մեծ» . . .
Օ, հարազա՛տ ընկեր իմ, իմ բարեկա՛մ, իմ քու՛յր,
Անվերադարձ անցած հերոսակա՛ն իմ կին,-
Ահա կրկի՛ն արև է իմ խավարած հոգում
Եվ կենսատու ժպիտ է իմ տարամերժ դեմքին:-
Երբ դադարեց քո ձայնը այն երեկո - հանգիստ
Ես շոյեցի ճակատըս ու վառեցի կրակ,

Եվ հանձնելով իմ կյա՛նքը հերոսական կամքիդ՝
Ես այրեցի երգերըս մի երեկո գրած. . .
1929

Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան Ամրոցում
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ես, անբարբառ մի մանուկ,
երկու ձեռքս պարզեցի. . .
ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Այս ամրոցի օդում՝ մգլահամ ու ճնշող՝
Ստվերներ են շրջում օրհասական,-
Եվ անցյալի մռայլ ոտնաձայնն է հնչում
Ինչպես մահվան քայլերգ հերոսական. . .
Ուրուների նման արնակարմիր ու վեհ,
Հայացքներում վճիռ ու տառապանք անզո՝
Տեսլանում են ահա մարտիրոսներն իմ դեմ
Եղերական ու սուրբ կերպարանքով:-

Այսպես, շարան-շարան, ստվերներ հի՛ն,
Հին անուններ - այնքան հերոսական,
Դեմքեր - և՛ պարզ, և՛ ջինջ, և՛ սիրելի -
Ահա կանգնում են իմ մտքի առաջ:
Սերունդներ են ամբողջ, մի վեհ բանակ,
Շռնդալով անցնող հաղթական երթ,
Հերոսության, փառքի մի ճանապարհ անհաս,
Հիմա դարձած անցած օրերի երգ. . .

Իսկ այս բակում ահա, ուր հիմա մի
Շենք կա կանգնած ուրիշ,- այստեղ ահա
Ա՛յլ բաստիոն է հին ու ամեհի
Ցցված եղել առաջ, որպես պահակ
Արքաների փառքի ու ցոփության. . .
Հյուսիսային այն ցուրտ դեկտեմբերյան օրից,
Որ արշալույսն եղավ այս օրերի,
Տառապել են այստեղ բազմություններ ուրիշ,
Բայց նո՛ւյնքան վեհ, անբիծ հերոսների:
Իմ ուղեղի միջով հիմա նրանք
Ահա անցնում են լուռ, խստաբարո,
Խարազանի հետքեր մարմինների վրա,
Բայց աչքերում վճիռ մի չմարող:
Մտաբերում եմ ես նրանց մեկ-մեկ,

Ռիլեևից մինչեւ պայծառատես
Այն մտածողը վեհ ու հանճարեղ,
Որին Մա՛րքսն է մի օր անվանել մեծ:
Այս քարերի վրա, այս պատերի,
Որոնց նայել են այդ մարդիկ մի օր -
Հայացքների նրանց ու խոհերի
Անանց հետքերն եմ ես փնտրում սիրով:
Վաղուց արդեն թողել, հեռացել են նրանք,
Որոնք ինձ հետ մտան բակն այս ահի,-
Անխոս նայում եմ ես այս պատերին մռայլ,
Շուրջս մութն է արդեն ու ամայի:
Հրաժեշտ եմ տալիս արդեն նրանց,
Շուռ եմ գալիս արդեն, որ գնամ ետ -
Երբ իջնում է հանկարծ ուսիս վրա,
Անակնկալ՝ իջնում է մի ծանր ձեռք:-

Ետ եմ նայում, վերև. . . Թեքված ուսիս՝
Մի մարդ՝ դեմքով հեռու, անիրական,-
Մտերմական ձայնով ասում է ինձ.
- Դուք ինձ մոռացե՛լ եք, բարեկամ. . .
Բարձրահասակ է, ջղուտ, աչքերը սև,
Բակենբարդներ ունի, փոքրիկ մորուս:
Ես որտե՞ղ եմ նրան արդյոք տեսել.
Կյանքո՞ւմ արդյոք, տենդո՞ւմ, թե՞ գրքերում:
Վշտանման ժպիտ մի աչքերում՝
Նայում է նա, նայում՝ հայացքն հառած.
- Ի՞նչ է, - ասում է,- չե՞ք մտաբերում
Տարիներում այն մութ իմ բարբառած
Շռնդալից երգերն ըմբոստության մասին:-
Մաքառելո՛վ անցա ուղին ես իմ,
Պայքարելո՛վ այն սև բռնության դե՛մ,-
Եվ պարծանքո՛վ կասեմ, որ բարեկամ էի
Ես Հերցենի, պոետ Օգարևի հե՛տ. . .
- Ա,- զարմանում եմ ես, ճանաչելով նրան,
Պարզում թևերս, որ նրան գրկեմ. -
Նա ողջունում է ինձ ու հեռանում արագ -
Ամայի բակն է լոկ լռում իմ դեմ. . .
1929

Անառակ որդիներին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

(Դիֆերամբ)
Դուք, որ վատնեցիք մեր գանձը հետին -
Մեզ թողիք տկլոր ու բոկոտն, ու խեղճ,
Եվ գլուխը մեր թեքեցիք գետին,

Եվ նախատինքը մեր դեմքը թրջեց -
Երգում ենք ահա ձեզ փառք ու պատիվ՝
Չորեքթաթ կեցած ձեր կառքի առջև:
1929

Անկումների սարսափից
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ե՛ս եմ հիմա - մի պոետ. և իմ անունը - Չարենց -
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական
Դեպի դարերը նորից՝ դեպի վառվող Ապագան:

Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի.
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի՛:

Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բոլոր
Եվ իմ մորմոքը վառել թախիծներով ահավոր:

Եվ ինչո՞ւ է իմ առաջ ելել աղջիկը քո հին՝
Բորբ աչքերով իր կանաչ ու հմայքով իր դեղին:

Ուզում է մե՛րկ լինեմ ես, ու անսփոփ, ու անօգ,
Որպես մեռել մի հրկեզ. որպես կորած մի մանուկ:

Եվ չարձակած ո՛չ մի նետ՝ անկումների սարսափից,
Ես փախչում եմ ահա ետ - ես նահանջում եմ նորից:

Եվ աչքերս, որոնց դեմ կանգնել է բիլ մի նկար -
Նորի՛ց հառնում են դեպի ամբոխները խելագար:

Նրանք ելել են նորից, նրանք շատ են, նրանք վառ,
Ու ավերե՛ն պիտի ձեր քաղաքները լուսնահար:
Ո՛չ մի հմայք էլ պիտի ձեր աշխարհը չունենա՝

Նրա տեղ մահ ու ավեր, վերք ու մոխիր կմնա:

Ու չի ելնի մոխիրից տխուր հմայքը ձեր տան,
Ու չի լինի էլ սիրո քաղցր ու կապույտ ձեր շղթան:

Չեն վառվելու տռփակեզ կանանց աչքերը էլ ձեր,-
Նրանք մոխի՛ր կդառնան, չե՛ն բորբոքվի նրանք էլ:

Եվ չի՛ հիշի ո՛չ մի սիրտ, որ դարերի մեջ մի օր
Սիրտս եղել է գերի անկումներին ահավոր:

Որ եղել է դարերում մի սարսափի նման կին,
Որը նետել է հեռու աստղանկար իմ հոգին:

Նրանք կգան, կավերեն, - չի մնա էլ ոչինչ՝
Ո՛չ դրախտը ձեր գեհեն, ո՛չ թախիծը ձեր դյութիչ:

Եվ չի լսի ո՛չ մի կին իմ անկումի մասին այս,
Որ դարձրեց իմ հոգին թարախակալ մի երազ:

Եվ չի մատնի ո՛չ մի բառ շնչում իմ տոթ երգերի,
Որ եղել եմ ես տկար, որ եղել եմ ես գերի . . .

Ես պոետ եմ - և հիմա իմ վառ երգերը պիտի
Դեպի գալի՛քը թռչեն սլաքների պես նետի:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ, հաղթական,
Դեպի դարերը նորից, դեպի կարմիր ապագան . . .
1920

Անքնություն
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են ձիերը,
Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
Պայտերը խփում են, խփում են հողին . -
Անծա՛յր է գիշերը, անհայտ է ուղին:
Գնո՛ւմ են, գնո՛ւմ են, գնո՛ւմ են ձիերը,
Մոտիկ են, հեռու են, դոփում են պայտերը,
Պայտերը դոփում են քունքի՛ս մեջ հիմա . -
Անհա՛յտ է աշխարհը՝ անցում է ու մահ .

Արմենուհի Տիգրանյանին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Աշխարհը մութ ու դժվար, սիրտը կարոտ ու ագահ,
Ուզում է լույս մի աշխարհ, սիրտը կարոտ ու ագահ,
Չի հասկանում, որ չկա, կարծես մանուկ լինի չար.
Գանգատվում է անդադար, սիրտը կարոտ ու ագահ,
Մի խոսք չկա, որ ասես, արտասվում ես ու լռում,
Ա՜խ, չի դառնում կարծր քար, սիրտը կարոտ ու ագահ։
1920

Բալլադ սիրո
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Արփենիկի հիշատակին

Երբ առաջին անգամ բացվեց
Սիրո գարուն արեւավառ,-
Երբ ես տեսա ծաղիկ ու սեզ՝
Բացված կյանքում եւ ինձ համար,-
Ինչպես գարնան առու անբիծ,
Ինչպես սիրո քնքուշ քնար,-
Կարկաչելով անցար կյանքից,
Իմ սեր անգին, իմ սեր անմար...
Ինչպես այգում առուն անտես
Գիշերներին աստղանկար
Լռության մեջ տխրահանդես
Երգում է հար ու անդադար,-
Այդպես՝ թողած աշխարհն ու ինձ,
Դարձած կարոտ ու հուշ անմար,-
Քո երգն ես միշտ երգում նորից,
Իմ սե՛ր անգին, իմ սեր անմար։-

Ա՜խ, նո՜ւյնն է միշտ քո երգն անծայր,
Բայց միշտ անհուն ու խո՜ր այնպես,
Ինչպես անդարձ մի ճանապարհ,
Որ նոր է միշտ, ինչքան քայլես։
Ամեն վայրկյան երգում ես ինձ
Սիրո կարոտն անմխիթար,-
Երգն ես երգում անցնող կյանքիս,
Իմ սե՛ր անգին, իմ սեր անմար։-

Ժամանակի նման անեզր,
Եվ լռության նման անբառ -
Որքան գնում - այնքան անեղծ,
Եվ խո՛րն ես դու,- ինչպես անտառ։-
Ամեն գարնան կարծես նորից
Նույն գիրքն ես ինձ կարդում անբառ,-
Եվ նո՛ր է քո իմաստը միշտ,
Իմ սե՛ր անգին, իմ սեր անմար. . .

Եվ ես գիտեմ, որ երբ քեզ պես
Մի օր ես է՛լ ննջեմ անդարձ,-
Կիպարիսներ սգահանդես
Շիրմիս վրա շրշան երբ սառ,-
Նոքա անվերջ ձայնով քո ջինջ
Պիտի երգեն սիրողաբար -
Կանչեր կյանքի, կարոտ աննինջ
Եվ մոռացման տրտունջ անբառ. . .
1937

Բարձրահասակ բարեկամիս
հեղինակ՝ Եղիշե Չարենց

(Ա. Հ.)

Ախ, քո բոյը քեզ ներշնչել է
Վերևից նայել ամենքին.
Մի հեգնանք կա միշտ քո դեմքին,
Որ քո բոյը քեզ ներշնչել է։ —

Կարող են հասնել լոկ ճանճերը
Քո քթի բարձրերն անմեկին.
Գուցե հենց նրա՞նք քեզ ներշնչել են
Վերևից նայել ամենքին. . .
1925

Բոլորը քեզ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ինչքան որ հուր կա իմ սրտում—բոլորը քեզ,
Ինչքան կրակ ու վառ խնդում—բոլորը քեզ.—
Բոլո՛րը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝

Դո՛ւ չմրսես ձմռան ցրտում,—բոլո՛ր քեզ…

Գիշերն ամբողջ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Գիշերն ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արևի մասին։
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար —
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին։

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն՝
Արևանման, արնավառ խոսքի, —

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար —
Խոսքեր չկային, ու արև չկար . . .

Դաշնակցականներին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

(Ներբող քաղաքական)

Լծված տերերի շառաչուն կառքին՝
Հոնդում եք դուք այդտեղ վայրահաչ.
Ժանգոտած սուսեր ձեռքերիդ պահած՝
Անկում եք կարդում իմ նոր աշխարքին։
Օ, դո՛ւք, ողբալի պնակալեզնե՛ր,
Բռնակալների մի հետին քուրջում
Կծկըված՝ արդյոք կարո՞ղ եք տեսնել,
Թե ինչո՛վ ենք մենք ապրում ու շնչում։
Կարո՞ղ եք արդյոք ձեր դեղին ոգին,
Որ սնվել է լոկ հրով ու արյամբ.-
Ծառս չլինի ու չբողոքի
Իմ երկրի հանդեպ, որ հավե՛տ հարյավ։
Դուք չե՞ք հրդեհով միշտ շառագունել
Ու երկիրն հանձնել սրի ու հրի,
Օ, դո՛ւք, արշինի՛ երկրպագուներ,
Ասպետներ ոսկու ու մաուզերի։
Դուք չէի՞ք արդյոք, որ բախտը այս մերկ,

Բազում սրերով զարկած աշխարքի
Ձեր պիղծ ձեռքերով կապեցիք երեկ
Բռնակալների արնածոր կառքին:
Դուք չէի՞ք, որ մեր այս բազմալեզու
Երկրի առաջին այգաբացին դե՛ռ,
Գործերով ձեր պիղծ, ու ժանտ, ու քսու
Դարձաք բռնակալ ցարերին ընկեր:
Եվ ըմբոստության շունչը գեղեցիկ,
Որ հառնում էր այն դժնի օրերում-
Դուք չէի՞ք, որ ձեր ձեռքով խեղդեցիք
Այն ազգամիջյան սև նախճիրներում:
Դուք չէի՞ք, որ ողջ Ժողովուրդը իմ
Այն անօրինակ փորձության ժամին
Քշեցիք դեպի դաշտերը ռազմի,
Որպես հավելյալ թնդանոթի մի՛ս:-
Անշե՛ղ է եղել ձեր ուղին միշտ է՛լ,
Դուք պատվով եք ձեր պայքարը տարել.-
Եվ դա - տերերի պայքարն է եղել
Իր երթին ելած ժողովրդի դե՛մ:
Դա չդադարող պայքա՛րն է եղել
Ձեզ կյանքի կոչած դասակարգերի,-
Եվ ձեր գործերի պսակն հրեղեն
Եղել է երկիրն՝ արցունքի հեղեղ,
Եվ ժողովուրդը՝ կրկնակի՛ գերի: -

Ո՞ր դժոխքն է էլ ձեզ այդպես հեգնել
Ու լցրել այդքան անմիտ ցանկությամբ,
Որ տե՛ր եք ուզում դուք այսօր կանգնել
Դարերի՛ ավանդ մեր ժառանգության:-
Դուք տեր եք ուզում ձեզ հայտարարել
Այն հերոսական, հսկա պայքարի,
Որ ժողովո՛ւրդն է իմ երեկ վարել
Ընդդեմ բռնակալ սուլթանի՛, ցարի՛:
Դժգոհ է եղել իր վզին նստած
Բռնակալներից նա բազմապիսի,-
Դուք նրա վսեմ ընդվզումը այս
Ենթարկել եք միշտ ձեր մութ երազին:-
Նա ծա՛ռս է եղել տիրողների դեմ՝
Լինելով անհաց վաստակի գործիք,-
Դուք ըմբոստության այդ տենչը վսեմ
Աշխատել եք միշտ ցանցել ու լծել
Թե՛ հայ, թե՛ օտար տերերի գործին:-
Լեռնացել է նա, իր սիրտը սրբել

Արհավիրքների հրե հորձանքում-
Դուք նրան դավել, մեջքի՛ց եք խփել
Ու տարել անվերջ անկումից անկում:-
Զգտում եք հիմա պայքարը այդ մեծ
Ձե՛րն հայտարարել մտքերով մթին,-
Մենք չե՛նք տա սակայն այդ պսակը ձեզ,
Չի սազում նա ձեր արնոտ մռութին:
Իզո՛ւր եք ոռնում այդպես վայրահաչ
Դուք անկախության պայքարի մասին.-
Դա մե՛րն է հիմա, դա մե՛րն էր առաջ,
Որքան էլ դավով դուք բազմապիսի
Փորձեր եք արել, փորձում եք հիմա,
Ինչպես միշտ՝ ահա կրկի՛ն ու կրկի՛ն
Մեզ քշել դեպի կործանում ու մահ,
Մեզ լծել, ծախու գրաստի նման,
Թե՛ հայ, թե՛ օտար տերերի կառքին:

Ինչպես աշխարհի ճորտերին բոլոր.
Այնպես էլ գերի աշխարհին իմ հին-
Երկինք մի մաքուր, արև մի բոսոր
Լոկ հոկտեմբերյան հողմերը տվին:
Մեզ ասին նրանք, որ կյանք մի վսեմ
Կերտելու համար հարկավոր է նախ
Ձեր դե՛մ մահացու պայքար սկսել,
Ձեզանի՛ց լինել հեռու ու անկախ:
Եվ կրում ենք մենք այդ պայքարը վեհ
Մեր երկրի անկախ արևի ներքո,
Որ Լենի՛նն է մեծ մեզ մի օր տվել՝
Պրոլետարիատի հաղթական ձեռքով:
Ոռնացե՛ք այդտեղ, որքան կամենաք,
Ու սրե՛ք մեր դեմ սուսեր ժանգոտած,-
Մենք կլնենք անհա՛ղթ, մենք կլնենք անա՛հ,
Երբ թնդանոթը մեր դեմ որոտա:-
Իսկ մինչ այդ՝ կապված ամբողջ աշխարհի
Պայքարի ելած ստրուկների հետ՝
Կերտում ենք ահա մի շենք վիթխարի,
Որ շիրիմն է ձեր լինելու հավետ:-
Մաքառում ենք մենք՝ մեր երթին լծված,
Աշխատում անդուլ, կերտում, կառուցում,-
Եվ վաղվա անմար հավատով լցված՝
Երգում է քնարն իմ պղնձաձույլ. . .
1929

Դարեր շարունակ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Դարեր շարունակ, ժողովուրդ դու իմ,
Տեսել ես միայն փորձանք ու աղետ,-
Կարդում ենք միայն գրքերում քո հին
Վեպեր թախծության, տխրության տաղեր -
Դառնություններիդ երթը դժվարին
Գալիս է, հասնում Լենինյան դարին։
Դարերի անդուլ անցորդ եղար դու -
Քշված բազմաթիվ ազգերի երթով,
Քանի՛ երկրակալ, քանի՛ պետություն
Բարձրացել, տիրել, անցել են հերթով
Եվ մահ տարածել քո ճանապարհին -
Դեռ դարեր առաջ Լենինյան դարից։

Ելած պատմության այգերում այն վաղ,
Երբ Էլամն էր դեռ իր ուղին հարթում -
Իբրեւ ուրվական մի արնաշաղախ
Դարերի միջով հասար մի օր դու
Անփառ վախճանին՝ քո ճանապարհին
Եվ բացվեց քո դեմ փրկության տարին։
1934-1935

Ես իմ անուշ Հայաստանի
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու Նայիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում։

Ուր է՛լ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան - յա՛րն եմ սիրում։

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամբա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում։

Զարմանալի աշուն
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Այս աշունը եկավ, բացվեց ինչպես երբե՛ք,-
Եկավ - ինչպես զինվոր ու ղեկավար.-
Այս աշունը բերեց իմաստության երգեր
Եվ կորովի գրեր - երգիս համար։-
Ե՛վ աշնան ցուրտ քամին ինձ մարտակոչ թվաց,
Թվաց կռվի կանչող հնչուն շեփոր,-
Եվ անձրևի շնչով, երբ երեսիս հևաց -
Ինձ զգացի ես թարմ - և անչափ նո՛ր։-

Եվ անձրևի թելերն ինձ թվացին թելեր՝
Աշխարհներին կապող և կյանքին խո՛ր,-
Կարծես ծառերն անգամ պայքարի են ելել,
Որ թոթափեն հուշերը - և դառնան նո՛ր...

Շրշուն աշունն այսօր ինձ գործ ու կյանք վսեմ,
Եվ ո՛չ թե մուժ, ու մահ, ու անկում է գուժում։-
Օ, հիրավի, երբե՛ք ես դեռ չէի՛ տեսել
Մի այսպիսի՛ աշուն...
1931

Էլի գարուն կգա
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա։
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա։

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե - նա՛ կասե վաղը.
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա։

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը -
Էշխը կրակ կըլի՝ արին կմնա։

Ուրիշ սրտի համար կհալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոզալը լաց կըլի, կընկնի արցունքը -
Գերեզմանիս մարմար քարին կմնա։

Էպիքական առավոտ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Աղջամուղջը նայում է աչքիս
Այսօր խստաբարո, զգա՛ստ։
Առավոտը շուտով կբացվի,
Եվ սիրտս խնդություն կզգա։
Ինչ լա՜վ է՝ բարձրանալ կանուխ
Եվ տեսնել, ճեղքելով մառախուղը,
Թե ո՜նց է ձգվելով բարձրանում
Ծխնելույզի ծուխը։-
Զգալ, որ հո՛գսն է արթնանում,
Որ ուղի՛ պիտի դեռ գնաս,
Մի ուղի, որ վե՛ր է դեռ տանում,
Մի ճանապարհ անհաս...
Դու այդպե՛ս բացվեցիր գլխիս,
Իմ վերջի՛ն հասունություն...
Դժվարին է հիմա իմ ուղին -
Եվ գնում եմ ահա ես արթուն։
Դիմացից հո՜գսն է նայում,-
Հարկավոր է երկա՜ր մաքառել,
Որ գործը լինի մնայուն,
Ինչպես միջօրեի արև։-
Դիմացից սերունդնե՛րն են նայում,
Սաստում են, որ գնամ զգաստ.-
Ինձ անտես մի ձեռք է պահում
Ճանապարհին իմ այս...

Սիրո՛վ եմ բաժանվում քեզանից,
Իմ հախո՛ւռն անփութություն,
Իմ անհոգ օրե՜ր պատանի,

Իմ շռա՛յլ ջահելություն։
Ողջունում եմ քեզ խնդությամբ
Եվ ո՛չ թե դառը ցավով,
Իմ վերջի՛ն, վերջի՛ն այգաբաց,
Իմ էպիքական առավոտ...
1929

Թիֆլիսցի կինտոն
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Բազմել է ցարերի գահին
Թիֆլիսցի նեղճակատ կինտոն,
Խրոմե սապոկներ հագին
Եվ գահը արել է ֆայտոն։
Նստել է, քշում է բռի,
Վարգում է, ոստնում է, անցնում,
Տիրան է, Ներոն է, բռի
Սփռում է արյուն ու արցունք։

Լռել են ձայները «ի զեն»,
Դառել են կեղծած հիացում,
Նորավոր երկիրը հյուսկեն
Ժայթքում է իր մեջ, մակածում,

Որ հետո ահավոր պարպի
Խլացնի որոտներն ամպեղեն
Եվ ինչպես հրաբուխ պայթի,
Հուրհրա լավան հրեղեն,

Շառաչի, հորդանա, հորդի
Արնաներկ գահի վրայով,
Ջի բավ է արեւներ մորթի
Այդ կինտոն սարդի ճակատով։

Օ, ե՞րբ է Մսըրը եղել
Մեր հիմքում նման հոր փորող,
Մեզ ոչ ոք այսպես չի նեղել,
Ինչպես այդ հարճորդին կարող։

Սեւ կառքի կառապան լկտի,

Բազմել է ցարերի գահին,
Լափում է որձակը մեր մտքի,
Զրկում է մեզ հունտից ազգային։

Ի՞նչ անի նստվածքը ռամիկ
Կավատի դավից անտեղյակ,
Արեւ էր, դառել է մահիկ,
Աշխարհում՝ մնացել մենակ։

Օ, ո՞ւր եք, աստղեր, արեւներ,
Իջնում է ազգիս երեկոն,
Եվ եղավ չըլսված մի Նեռ
Թիֆլիսցի նեղճակատ կինտոն։
1937, բանտ

Թմբուկ են խփում
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Թմբուկ են խփում, հարսանի՛ք է,
Հարսանիք է երկրում աշնանային -
Արշավում է անողոք գալիքը՝
Զգեցած զգեստներ մահի...

Ինչ լավ է, նաիրյան երկիր,
Որ բերքիդ երկունքից առաջ
Թիարան քշվեց - անարատ
Հելիկոնը սրբազան երգիդ...

Գոնե արդ՝ տագնապիդ ժամին
Ցնծության երգեր կերգեն լոկ
Չղջիկները քո եղկ ու «խելոք»
Եվ օտար դաշտերի քամին...
1928

Թուղթ Ակսել Բակունցին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

ԹՈՒՂԹ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻՆ, ԳՐՎԱԾ ԼԵՆԻՆԳՐԱԴԻՑ

Իմ սիրելի Ակսե՛լ, չեմ մոռացել ես քեզ...
Ահա նստած այստեղ, այս խստաշունչ հեռվում,
Մտաբերում, հիշում,- ու, տե՛ս - գրում եմ ես

Քեզ հանգավոր նամակ:- Այս ափերում,
Հյուսիսային այս ցուրտ, դժկամ հեռուներում
Եռում է կյանք մի այլ, անօրինակ ու նոր:-
Միայն Նեւա՛ն է, որ իր դարավոր հունով
Քշում է ջուրն իր գորշ դեպի անհայտ ափեր,
Այս ծանրանիստ Նեւան՝ անեզրական ու վեհ:
Այս քաղաքում, ուր ցոփ արքաներ են ապրել,
Ուր շաչել է մտրակը ստրուկների վզին,
Որպես վերին պարգեւ,- ուր հյուսիսի
Մառախուղի նման այս անտարբեր
Իշխաններն են դարեր առեւանգել, հարբել,
Կախաղաններ կանգնել հարյուրներով,-
Այս քաղաքում հիմա եռում է կյանք մի նոր,
Զարմանալի մի կյանք:- Այստեղ հիմա
Բանվորական դեմքեր դու կտեսնես միայն,-
Երեւանից մինչեւ օվկիանոսը Խաղաղ,
Օ, աշխարհո՛ւմ ամբողջ դժվար լինի մի այլ
Այսքան անխոնջ, զգաստ, խստաբարո քաղաք:-
Այստեղ զգաստ դեմքեր լոկ կտեսնես քո շուրջը,
Պարզ, հասարակ դեմքեր, դեմքեր, որ լուրջ են,
Ինչպես տարիքը, հոգսը, ինչպես «վերին»
Իմպերատիվը սերունդների...

. . . . . .

Այս հասարակ մարդկանց բազմություններն ահա,
Որ դեմքերի վրա ունեն պահած
Մի անխորտակ վճիռ,- այս մարդկանց ես
Տեսա գործի ժամին, տեսա հրկեզ
Հնոցների առաջ,- տեսա ինչպես
Գուրգուրանքով, սիրով, լրջությամբ խոր
Այդ ժխորում գործի, այդ պայքարում
Ընդդեմ նյութի,- անդուլ, գիշեր ու զօր,
Ընդվզում են նրանք ու մաքառում:-
Ինձ հմայեց այդ տենդը:- Այդ պայքարում վսեմ
Օ, ո՛չ թե մարդն էր լոկ խոփեր կոփում,
Այլ ներշնչում էր եւ՛ նյութը մի անհուն սեր
Աշխատանքում կոփվող նրանց ոգուն:
Տեսա հետո նրանց ես հանգստի ժամին,
Թատրոններո՛ւմ տեսա, միտինգներո՛ւմ,-
Եվ ամենուր նրանց այդ լուրջ, այդ խստամիտ,
Այդ մաքառող ոգի՛ն էր խանդից եռում:-
Եվ ամենուր նրանց հայացքների միջից

Աննինջ, հոգսը դեմքին, հետապնդում էր ինձ
Այն ղեկավարը մեծ, խստաբարո,
Որ մկանուտ մարդկանց բազմություններն այս հոծ
Մի առավոտ մղեց դեպի գրոհ...

. . . . . .

Եվ նայելով նրանց, աշխատանքի բոցում
Իրենց ոգին կոփող այդ մարդկանց - ես
Տեսա, որ մի՛տք է մի ուղեղս սղոցում,
Ինձ անդադար կրծող մի միտք, թե մենք
Ունեցե՞լ ենք արդյոք մեր առօրյա գործում,
Մեր երգերում, գրած գրքերում մեր,-
Ունեցե՞լ ենք արդյոք մեր խոհերի խորքում
Այս խստությունը խոր ու անչափ վե՛հ:
Մեր երգերում, գրած մեր գրքերում բազում,
Մեր գործերում, թեպետ պոետական,
Մեր մտքերում՝ հաճախ թե՛ մեղկ, թե՛ գունազուրկ,
Մեր հույզերում - այնքա՛ն լիրիկական,-
Մենք չե՞նք եղել արդյոք զարմանալի անհոգ,
Զարմանալի անփույթ, հաճախ թեթեւ,-
Եվ պահեր ենք վսեմ մենք ունեցել եթե -
Դա չի՞ եղել արդյոք պատահական արդյունք
Պատահական ժամի... Կոփե՞լ ենք մենք
Մեր խոր խոհերն արդյոք աշխատանքի բոցում,
Կռե՞լ ենք խոսքը մեր, որպես պողպատ,
Որ նա տոկա, կիզվի ու անդադար շողա
Սերունդների սրտում... Եվ հնոցում
Այս օրերի, որ մեզ հրկիզում են անդուլ,
Հրո՛վ, հրո՛վ սրբում մեր պիրկ ոգին -
Տքնե՞լ ենք մենք արդյոք աշխատանքով հանդուգն,
Որ մեր գործի վրա ժանգ չչոքի...
Մտածե՞լ ենք արդյոք, որ խոսքը - թո՛ւջն է նույն՝
Դիմադրող, համառ,- եւ եթե մենք
Չհրկիզենք նրան մեր խոհերի հունում,
Աշխատանքով անդուլ թե չձուլենք -
Նա կխամրի, հանգած, կանոսրանա,
Կփուխրանա, ինչպես մգլած պտուղ,-
Եվ բշտիկներ կուռչեն, լցված օդով,
Այդ փչացած թուջի - այդ խոսքերի վրա...

. . . . . .

Տրված է մեզ երգի անեզրական շնորհք,
Տրված է թափ, թռիչք, մտքի խոյանք ու թեւ,-
Իսկ մենք սահում ենք դեռ, զարմանալի թեթեւ,
Այն փոշապատ, մաշված ուղիների հունով,
Որ հունն է բութ մտքի, տրաֆարետի, սերտած
Երկու խղճուկ հանգի, երկու կոտած
Դատողության,- (թեկուզ հիմնականում
Դատողությունն այդ վեհ է, սակայն հաճախ
Բզկտում են նրան, փետրահանում
Ու կմախքը նրա խեղճ ու կրակ
Թրջում ճղճիմ, հիմար հիացմունքի թուքով:-
Այդպես կարող է լոկ ստրո՛ւկն հոգով
Անմտության, անշունչ հնչնախաղի փոխել
Հանճարեղ խոհն անգամ:- Այդպես ահա՛
Արծիվների թեւե՛րն են մարդիկ կտրում մեկ-մեկ
Եվ վանդակում պահում նրանց կմախքը լոկ
Փետրահանած ու մերկ):-
Հիմա խոհե՛ր կան՝ այդ արծիվների նման:-
Ու պոետներ բազում, որոնց համար
Հիմնականը փետո՛ւրն է - մի ամեհի խանդով
Փետրաթափ են անում նրանց անդուլ:-
Այդ խոհերից վսեմը - աշխատա՛նքն է գուցե.-
Կարդա՝ նրանց երգերը՝ աշխատանքին ձոնած,
Կարդա՛ սրտով մաքուր,- եւ ինձ ասա՛ հիմա՝
Աշխատե՞լ են նրանք երբեւիցե...
Գիտե՞ն նրանք արդյոք, որ խոսքը - թո՛ւջն է նույն,
Որ պահանջում է ջանք ու քրտնաջան լարում,
Մաքառման շունչ ջերմին, հոգնության տենդ ու թույն,
Պահանջում է խոնջենք . . . . . .

. . . . . .

. . . . . .

Մենք շա՛տ էինք անփույթ մեր հանճարի հանդեպ,
Մեր օրերի, գրչի, մեր խոհերի բազում:-
Վայե՞լ է մեզ լինել անինքնուրույն, անդեմ,
Եվ օրերում վատնել մեզ տրված գանձը զուր,
Ինչպես վատնել է այն ճորտը լեգենդական:-
Մենք երգեր ենք գրել:- Իմացե՞լ ենք, սակայն,
Որ խոսքը, շեշտը մեր յուրաքանչյուր,
Բաժանվելով մտքի՛ց մեր, մեր խոհերից -
Դառնում է ո՛չ թե լոկ դատարկ հնչյուն,

Այլ բարձրացող, ելնող սերունդների
Սրտին, մտքին, ոգուն ու տենչանքին նետած
Մի դրոշակ, կամ սեւ նշավանքի նշան:-
Որ խոսքը, երգը մեր՝ մեր խոհերով նշած՝
Կամ կարող է լինել հուրհուր դրոշ,
Կամ անկումի ժամին մեր խոհերից պոկած
Ողորմելի մի լաթ, մի սեւ ծվեն, որով
Ցանկացել ենք մենք մեր եղկությունը ծածկել,
Մերկությունը ոգու ու անճարակ մտքի,
Որպեսզի սուր մի սեւ մեզ չծակե,
Որպեսզի միտքը մեր չբարձրանա ոտքի:-
Որ խոսքը - նյո՛ւթն է նույն, որ կոփում են սրանք,
Այս մկանուտ մարդիկ,- ու մեզանից
Պահանջում է նա սեր, ու տքնություն, ու ջանք,
Ու գերագույն լարում:- Եվ մենք քանի
Չենք սովորել դեռ մեր յուրաքանչյուր բառին
Նայել սիրով այս վեհ, այս խստությամբ ազնիվ,-
Դժվար թե խոսքը մեր հորիզոններ վառե
Եվ բարձրացող, ելնող սերունդներին հասնի...

. . . . . .

Հասել ենք մենք արդեն այն սահմանին, որից
Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք:-
Սին տենչերի փոշին մեր խոհերից քերենք
Ու ճանապարհ ընկնենք, մե՛ծ ճանապարհ, նորից:-
Ես տեսնում եմ հիմա տարիների հեռվում
Հորիզոններ՝ բազում փորձությունով հղի,
Հերոսություն, պայքար եւ աննահանջ ուղի,
Որ մի՛ անգամ է լոկ մեզ աշխարհում տրվում:-
Ճանապարհին այս մեծ, այս վերելքին ահեղ
Մենք չե՛նք հոգնի երբեք, չե՛նք կորցընի ուղին,
Չկտրվենք եթե սերունդների հողից,
Սերունդների՛ աչքով թե մեր երթին նայենք...

. . . . . .

Հիմա խոհերն են այս իմ ճակատին նստել:-
Ինձ այսպիսի՛ խոհեր ներշնչեցին նրանք,
Այն խստադեմ մարդիկ, որ կոփում են այստեղ,
Այս ցրտաշունչ հեռվում, չտեսնված մի կյանք:-
Այն մկանուտ մարդիկ, որ պահանջկոտ են, լուրջ են,
Ինչպես այս գորշ Նեւան, այս աղջամուղջը,

Ինչպես տարիքը, հոգսը, ինչպես «վերին»
Իմպերատիվը սերունդների...

Լենինգրադ - 10-16-1929

Իմ լուսաստղը
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Սոնետ

Առավոտ կանուխ բարձրացի՛ր,
Երբ դեռ նո՛ր մարմանդ լուսանում է:-
Կտեսնե՛ս լուսա՛ստղը կապտածիր,
Որ պայծառ ցոլքով բարձրանում է:-
Ա՜խ, այդպե՛ս բարձրացավ մի օր
Աշխարհում, Չարե՛նց, քո անունը...
Բայց հետո - կլանեց անհունը
Քո լուսաստղը - ցոլուն, ոսկեւոր:

Այդ ո՛չ թե Արեւն էր՝ բարձրացավ
Եվ սրբեց ոսկեզօծ քո ցոլքը
Իր շքեղ ցոլքերով պայծառ:-

Ո՛չ:- Չնչի՛ն ամպերի սեւ զորքը
Պաշարեց Արեւ՛ից առաջ քեզ,-
Իսկ այնտեղ, ներքեւում,- երգի սով էր,-

Բայց ցնծում էր Պառնասն առանց քե՛զ...

1928

Իմ օրերում
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ եւ ինքնուրույն,
Իմ օրերում ես ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն:

Իմ օրերում դժվար էր շատ լինել հաստատ ու մնայուն,-
Իմ օրերում պատմությունն էր յուրաքանչյուր բառիս նայում:

Իմ օրերում երգը միայն նրանո'վ էր մեծ ու անգին,-
Որ բորբոքում, հուր էր տալիս դեռ չկոփված, չեկած կյանքին:

Իմ օրերում շա՜տ էր դժվար երգը՝ կյանքի համար երգած.-
Յուրաքանչյուր բառը - կամ մի թռի՛չք էր վեհ, կամ մութ արկած:

Բայց օրերում իմ հուրհուրան աշխա՛րհ էր նոր ծնվում հնից,-
Եվ մե՜ծ եմ ես, քանզի ինձ մեծ երթ էր նշված Պատմությունից...

Իմ օրերի երգը եթե իմ տողերից հիմա լսես -
Ուրեմն ես մե՜ծ եմ ու խոր, երգի՛ց էլ իմ՝ խոր ու վսեմ...

Եվ եթե ես ունեմ մի բան, որով կարող եմ պարծենալ -
Իմ օրերի շափաղն է այդ, իմ օրերի ձայնը անահ...

Ողջո՜ւյն, ուրեմն, օրերիս, իմ օրերի անհո՜ւն շնչին,-
Եվ օրերիս հանդեպ այդ մեծ - թող երգս ձեզ թվա չնչին...

Բայց եթե կա երգում իմ գեթ շեշտ կամ մի բառ իմ օրերից -
Ես կմնամ հա՛ր ու հավետ, ես կարթնանամ մահից նորից...

Մե՜ծ եմ եւ վեհ իմ օրերով - ես այդ գիտեմ - հուր-- հավիտյան,
Ողջո՜ւյն, իմ ե՛րգ, իմ խնդությո՛ւն, իմ օրերի անհուն մատյան...

1934.III.2. Երևան

Ինչպես երկիրս անսփոփ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -
Մխում է սիրտս հիմա որբ, մխում է սիրտս բախտազուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

Եվ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն -
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ախ, այս երգերը իմ կարմիր -
Իմ ավերակ, իմ ո՛րբ երկրում...

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս ավերակ -
Այնպես էլ սիրտս - անսփոփ, այնպես էլ սիրտս - անուրախ,
Վե՜րք է դառնում սրտիս խորքում օրերի փա՛յլը այս հրակ -
Ախ, սի՛րտս իմ՝ բո՛րբ ու անսփոփ,- երկի՛ր իմ՝ ո՛րբ ու անուրախ...
1928

Իրիկուն է, քույր

հեղինակ՝ Եղիշե Չարենց

Իրիկուն է, քույր,— աչքերդ փակի՛ր,
Հոգնաբեկ, տխուր,— աչքերդ փակի՛ր։

Թարթիչներդ թող չթարթեն միգում,
Միգամած ու խոր աչքերդ փակիր։

Կոպերիդ տակ թող երազս թաղեմ,
Իրիկուն է, քո՛ւյր,— աչքերդ փակի՛ր…

Լուսամփոփի նման
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ցողիկին

Լուսամփոփի նման հախճապակե,
Որ հավաքած իր մեջ մի լուսեղեն անդորր
Քնքշություն է սփռում և՛ լուսավոր, և՛ խոր
Սենյակներում մեր մութ՝ գիշերային պահին, —

Այդպես, փոքրիկ աղջիկ, դու երկնային
Մի լուսամփոփ էիր թափանցիկ ու խոր,
Եվ աստղերի նման քո աչքերով
Լուսամփոփում էիր շուրջդ լույսով։

Մահվան քամին այդպես փշրեց մարմինդ անկար, —
Բայց աչքերիդ կրակը, որ նա մարեց քո մեջ,
Մեր սրտերում վառված՝ հուրհուրալու է հար...
<1936-1937>

Լուսամփոփի պես աղջիկ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Լուսմփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՛ պես երազի,
Կապու՛յտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի՛ պես աղջիկ. . .
Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում.
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն,
Որ չցնդի, չմարի՛ իմ հոգու հեռուն. . .

Լուսմփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՛ պես երազի,
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի՛ պես հոգեթով,
Լուսամփոփի՛ պես աղջիկ. . .
Կատեգորիա: Եղիշե Չարենց

Խեղկատակ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ու գինու պես քո հոգին
 Հորդ կթափվի նրանց մութ
Ու մահահոտ հատակին:
«Խրախճանք», բալլադ 1-ի

Կուզե՞ք - երգեմ՝
Ձեզ համար,
Հիմա:
Այնպես երգեմ, որ զգաք-
Ինչ որ կուզեք, կուզեք - սեր
Կուզեք - մահ:
Ես երգում եմ, որ հուզեմ.
Տալիս եմ երգս լուսե
Ու՛մ որ կուզեք. թեկուզ նա
Լինի պոռնիկը վերջին.
Դուր չի՞ գալիս ձեզ միթե
Այս քնքշությունը -
Առջի:

Ես երգում եմ ակամա:
Ի'նչ էլ երգեմ, կուզեք - սեր ,
Կուզեք - մահ: -
Բայց չե'մ կեղծում ես երբեք:
Լսե՛ք երգերս
Ահա-
Լսե'ք երգերս , բայց թե -
Չհարբեք:
Ես չեմ ուզում , որ հարբեք.
Լավ չէ , գիտե՞ք, երբ որ մի
Անհու՛ն կարոտ դառնում է քաղցր
Քամի…

Չե՞ք հասկանում:

Իզու՛ր, իզու՛ր։ Դուք պե՛տք է որ
Հասկանաք։
Թռչել է պետք. սակայն ու՞ր։-

Չե՞ք հասկանում. ես կուզեմ,
Որ իմ երգերը
Լուսե -
Ձեզ թուղթ թվան ու թանաք։
Չեք հասկանում… - Դուք պե՛տք է որ
Հասկանաք։

Ուրիշ - ոչինչ։
Ու հիմա --
Նու՛յնն է նորից. ես երգում եմ, որ հուզեմ
Ես երգում եմ - ակամա։
Ի՛նչ էլ երգեմ ՝ կուզեք - սեր,
Կուզեք - մահ։
Ես - խեղկատակ եմ հիմա…

Հայաստանին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Հազար ու մի վերք ես տեսել, - էլի՛ կը տեսնես,
Հազար խալխի ձեռք ես տեսել, - էլի՛ կը տեսնես։

Աշնան քաղած արտի նման՝ Հազար զոհերի
Չհավաքված բերք ես տեսել, - էլի՛ կը տեսնես։

Գլուխդ չոր քամուն տված պանդուխտի նման,
Հազար տարվա հեք ես տեսել, - էլի՛ կը տեսնես։

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Հովնաթան,
Ինչքա՛ն հանճար, խելք ես տեսել, - էլի՛ կը տեսնես։

Քո Չարենցին լեզու տվող երկիր Հայաստան,
Հազար ու մի երգ ես տեսել, - էլի՛ կը տեսնես։

Հայրենիքում
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ձյունապատ լեռներ ու կապույտ լճեր։
Երկինքներ, որպես երազներ հոգու։

Երկինքներ, որպես մանկական աչեր։
Մենակ էի ես։ Ինձ հետ էիր դու։

Երբ լսում էի մրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն -
Զարթնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կորուստը այն հին, աստղայի՛ն, անհո՛ւն։

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին։
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն
Խառնելով հոգիս աստղային մութին . . .

Հարդագողի ճամփորդները
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու՝
Երկու ճամփորդ՝ պատառոտած շորերով։
Ու սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական կարոտներով ու սիրով։
Մենք սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական ինչ-որ կարոտ, ինչ-որ սեր։
Ու սիրում ենք առավոտից իրիկուն
Ճամփա երթալ — ու հավիտյան երազել։
Աչքերիս մեջ մենք պահել ենք երկնային
Ճամփաների հեռուները դյութական —
Ու անցնում ենք ուղիներով երկրային,
Ուր բյո՛ւր մարդիկ երազեցին ու չկան։
Մշուշի պես մեր մանկությունը անցավ՝
Գորշ, անարև, անմխիթար մանկություն։
Զառանցանքի պես մանկությունը անցավ —
Ու հեռացանք։ Ու չենք դառնա կրկին տուն։
Լո՛ւռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝
Երազելով հավերժական հեռուներ։
Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում —
Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր։
Ու օրերում բազմագույն ու բազմազան
Վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,—
Բայց աչքերը մեր — արևներ չտեսան,
Եվ մեր սրտերը — լուսավոր հեռուներ։
Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան
Որոնեցին պատահական աչքերում
Հարդագողի ուղիները ոսկեման,

Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն։
Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
Ու սրտերում — արեգակներ ոսկեվառ.
Ու բզկտվեց հայացքներից անկենդան
Որբ սիրտը մեր՝ երազորեն — հոգեվար։
Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.
Սիրտս լցվեց . . . բայց չգիտեմ, թե ինչու —
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի . . .
Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն,
Կապուտաչյա երջանկության առասպել.
Մի երկնային առնչության պատմություն —
Ու կարծրացավ սիրտս՝ անլույս ու անբեր։
Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,—
Ու խնդացին լուսավո՛ր մեր աչքերին,
Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ —
Ու հեռացան։ Ու ո՛չ մի լույս չբերին։
Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,
Օտար մարդիկ հայհոյեցին ու անցան։
Միայն պոռնիկը մշուշում համբուրեց,
Եվ խելագարը բարևեց կիսաձայն։
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
— Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք . . .

Հնարավո՞ր է արդյոք
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Հնարավո՞ր է արդյոք, մի ամբողջ
Ժողովրդի երգ դատարան տանել
Եվ որպես խեղճ, հանցապարտ ամբոխ
Ե՛վ խարազանել, և՛ ամբաստանել...

Կարո՞ղ է արդյոք մի ժողովրդի
Երգն ամբողջովին, դպրությունը ողջ
Լինել հանցավոր, որպես տմարդի
Ինքնադատաստան կատարած ամբոխ...

Որքան էլ ինքս չլինեմ կապված
Իմ եղբայրների «դավադրության» հետ,
Սակայն՝ իբրև մարդ և իբրև պոետ
Պատրաստ եմ կրել ամենայն հարված

Նրանց բովանդակ ճակատին իջնող,-
Եվ եթե նրանք իրոք հանցապարտ
Մտքեր են դավել,- ես հլու, հպարտ
Կանգնում եմ ահա էությամբ իմ ողջ

Նրանց հետ մեկտեղ ձեր ամբաստանող
Սինկլիտի առջև և սրտով հոժար [պատրաստ եմ]
Ինքըս վերցնել ուսերով ուժատ,
Բայց ոգով ընդմիշտ և՛ պիրկ, և՛ անկոր

Նրանց կատարած հանցագործության
Ծանրությունն ամբողջ,- և կրել անահ
Ձերբակալություն, և՛ աքսոր, և՛ մահ,
Ո՛չ իբրև տաժանք, այլ՝ սուրբ խնդություն...

Բայց վաղը, եթե աշխարհի առջև,
Մութ նկուղների տաժանքից ելած՝
Կանգնեն բովանդակ մեր երկրի առաջ
Ընկերներն իմ այդ, իբրև վարձկաններ,-
Ես ինքս այնժամ ցասումով ահեղ,
Ոչ իբրև դատող կամ ամբաստանող,
Այլ՝ երկրիս համար խինդով խելահեղ
Ամենայն տաժանք խնդությամբ տանող -

Կկանգնեմ նրանց հանցագործության՝
Նշույլի համար ամենաչնչին -
Կրելու սրտով, և հոժար, և ջինջ
Ամեն մի պատիժ և խոսք պղծության -

Բանաստեղծ և այր մի նվաստագույն՝
Խոսք նշավանքի ես ինքս կասեմ
Անեղծ պոետի շրթունքով վսեմ
Եվ իրավունքով, որ չեն վաստակում

Քծնանքով, տիղմով, քսությամբ ստոր,
Այլ - ժողովրդի սրբազան սրտի
Ըղձանքը խորունկ և խոսքը խրթին
Անահ կարդալու դժվար արվեստով...

Մահվան տեսիլ
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՛ն քնար.–
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու։
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի-
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի։
Կանգնել են, լուռ իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նաիրյան իմ ո՛րբ հոգու.

Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան-
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ո՞վ դարձրեց-մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշպարան, ու երկնուղեղ փայտե՛ր երկու։
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհներգե ոչ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նաիրի . . .
Երթամ մարող ու մարմարող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ,-
Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուշեղ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր . . .
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան։
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,-
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա . . .

Մեռած պոետին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Նրանք ասում են, որ դու անցել
Ու հնացել ես, ու հեռացել,
Որ լքել են քեզ ու մոռացել
Օրերում այս խենթ ու դարձդարձիկ.
Բայց տե՛ս - կանչում է ահա մի ձեռ
Եվ մի սիրտ, որ քեզ սիրում է դեռ.

- Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր . . .
- Վերադարձի՛ր, օ, մենք քեզ կտանք
Թե՛ սեր, թե՛ հուրեր, թե՛ խնդություն.
Ինչպես սիրած մի թափառական
Դու կրկի՛ն, կրկի՛ն կմտնես տուն . . .
Կգգվի դեմքիդ քամի մի զով,

Օրերի շունչը, արդեն հնչե՛ղ,
Կլցնի հոգիդ անհուն հույզով -
Ու նո՛ր, նո՛ր երգեր կներշնչե . . .
- Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր . . .
- Այն ճանապարհով, որով մի օր
Անցար սրտաբեկ ու գնացիր -
Անցան թափորներ արևավոր
Ու նոր բյուրավոր դռներ բացին . . .
Այն երկրում, ուր դու մի օր լացիր
Ու մորմոքացիր այն սեւ բոցում -
Ահա գարուններ արեւածին
Ու շռինդ, ու վառք, ու կառուցում . . .
- Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր . . .
1928

Մարիոնետկա
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Կամաց, կամաց, կամաց, կամաց,
Ոտքերն հողին, հողին, հողին՝
Եկավ-գնաց, եկավ-գնաց,
Գունատ, դեղին, գունատ, դեղին։

Ձեռքը շարժեց — մեկ վեր, մեկ վար,
Ոտքը խփեց — մեռե՛լ, մեռե՛լ,—
Առաջ եկավ դժվա՛ր, դժվա՛ր,
Ձեռքը շարժեց մեկ վար, մեկ վեր։

Ահա՛, ահա՛, — թեքվե՛ց, թեքվե՛ց,
Կընկնի՛, կընկնի՛ . . . բայց չէ՛, նայի՛,
Շուրթը շրթից դանդաղ ջոկվեց,
Մնաց մի պահ՝ աչքը մահի։

Ու սո՛ւր ճչաց՝ կարծես բռնի
Աչքերն, անշարժ, հեռուն գամած.—
Այդպես հոգի՛ս պիտի մեռնի —
Կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց. . .

Որքան դաշտեր որ կան
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Որքան դաշտեր որ կան,
Որքան որ կան լեռներ,
Որքան գյո՛ւղեր, հյո՛ւղեր,
Ու քաղաքներ հսկա -
Կուզեմ ողջույն այնքան
Հոգուս խորքից թեւե՛ր.
Կուզեմ ամե՛ն ժխոր
Հոգիս ապրի, զգա:-

Կուզեմ երգում իմ այս
Հոգիս հրթի՛ռ դառնա,
Թռչի հեռուն հրկե՛զ.-
Ամեն անցորդ ապրի,
Ամեն անցորդ զգա
Խենթությունը երգիս...
Կուզեմ շնչում երգիս
Ամե՛ն անցորդ զգա -
Խենթությո՛ւնս հրկեզ,
Խնդությո՛ւնս հսկա...
1919-1920

Պատահական անցորդին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Մենք երկու՛սս էլ, մենք երկու՛սս էլ անվերադարձ աշխարհում
Ապրում ենք, կանք, գնում ենք - ո՞ւր, միևնույնն է մեր հեռուն:
Կանգնիր, անցորդ: Կանգնիր: Նայենք: Նայենք իրար - գուցե մենք
Հանկարծ ժպտանք՝ չճանաչված մի բարեկամ ճանաչենք:
Կանգնի՛ր, կանգնի՛ր, ո՞ւր ես վազում, ո՞ւր ես գնում դու արագ.
Աչքերիս մեջ գուցե գտնես ոսկեԺպիտ մի կրակ:
Դու ուրախ չե՞ս, որ ապրում ենք - ու հանդիպել ենք իրար,
Ո՞ւր ես անցնում անվերադարձ, որպես անդարձ ճանապարհ
Ե՛ս էլ կանցնեմ - տրտում մենակ, - ու կգնամ իմ անծայր
Երազ - ճամփան, որով դու էլ այս իրիկուն կույր անցար:
Դու կույր անցար, չնայեցիր ու հեռացար մշուշում.

Բայց ես երկար քո անծանոթ, օտար դեմքը կհիշեմ:
Կհիշեմ, որ դեգերումիս ճանապարհին, որպես հուշ,
Մեկը անցավ, իրիկուն էր. իրիկուն էր ու մշուշ ...
1916

Ստալին
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Իոհան Ահեղի ստվե՞րն է կրկին
Բարձրացել Կրեմլի գետնախորերից. —
Եվ զարհուրելի, խառնակ օրերի
Սարսափն է կրկին ավետում երկրին...

Մի՞թե անիշխան երկրի դեռ կայուն
Բռնակալության միակ հենարան —
Աչքերում կարմիր զարհուրանք արյան,
Եվ ինքն է դեռ այս երկիրը պահում...

Եվ մի՞թե սարսափ առած գազանի
Իր մահն զգացող բորենու նման,
Մահվան մուժն է նա հալածում հիմա
Շաչյունով կացնի ու խարազանի...

Եվ մի՞թե ինչպես դարեր դեռ առաջ,
Ապրում ենք կրկին ահեղ նախօրե, —
Եվ գալու են խոլ ու խառնակ օրեր, —
Ասպատակություն, նախճիր, կոտորած:
Եվ խարույկների հրաճարակին
Դեռ քանի՛ սերունդ պիտի մոխրանա,
Եվ միջնադարյան դեռ մուժ է գալու,
Մինչև ճառագի այգը իսկական...
1937

Սև կախաղան
հեղինակ՝ Եղիշե Չարենց

Ինձ բոլորն են խաբում, սիրտ իմ,
Եվ ես անօգ եմ մարդկանց հանդեպ:
Աշխարհը, կյանքը բիրտ է,
Իսկ դու միամիտ ես այնպե՛ս...

Գալիս են աչքերիդ առաջ
Կատարում ինչ որ կուզեն,

Իսկ դու հայացքդ վեր հառած
Որոճում ես հիմարական հույզեր:

Քեզ խաբում են, անում ոտնակոխ,
Եթե լույս ես տալիս, համարելով այն թույն
Զգտումներ և՛ սին, և՛ լրբենի թակով
Իրենց գործն են տեսնում վատթարագույն:

Երազում եմ միայն թքել դեմքիդ
Եվ լույսերիդ հանդեպ քեզ թույն ձոնել,
Լավ չէ՞ արդյոք որ դու կործանվելով հիմքից
Սև կախաղան ելած պարտությունդ տոնես:

Թքես ինքդ էլ քո այն ամենալույս
Ամենասուրբ կոչածդ ուրուների վրա
Անարգելով ամեն փրկության հույս՝
Ինքդ մարես ճրագն այս հուրհուրան...
1937